ՀՀ էկոնոմիկայի

նախարարություն

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բիզնեսի գրանցում էջ 3
2. Պետական աջակցության ծրագրեր. էջ 4
   - Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց միջոցառում էջ 5
   - Տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիր էջ 6
   - Արտադրական կարողությունների արդիականացման նպատակային ծրագիր էջ 7
   - Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում էջ 8
   - Կլինիկական փորձարկումների, կենսահամարժեքության հետազոտությունների իրականացման փոխհատուցման ծրագիր էջ 9
   - Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագիր էջ 10
   - Հարկային արտոնություններ (մաքսատուրքի ազատում) էջ 11
   - Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր էջ 12
   - Ներդրումային ֆոնդերում ներդրումներ կատարելու ծրագիր էջ 13
   - Ազատ տնտեսական գոտիներ (ԱՏԳ) էջ 14
3. Պետական աջակցության ծրագրեր. Գյուղատնտեսական ոլորտի աջակցության ծրագրեր էջ 15
   - ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր էջ 16
   - ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր էջ 17
   - ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թթ. ծրագիր էջ 18
   - ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիր էջ 19
   - ՀՀ-ում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թթ-ի ծրագիր էջ 19
   - ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թթ-ի ծրագիր էջ 20
   - ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր էջ 20
   - Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր էջ 21
   - Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագիր էջ 22
   - Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-28 թթ. ծրագիր էջ 23
   - Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագիր էջ 23
   - Մթերատվության բարձրացման փորձնական ծրագիր էջ 24
   - Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիր էջ 25
   - Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր էջ 26

Բիզնեսի արագ գրանցում *www.e-register.am* կայքի Գրանցել նոր ձեռնարկություն բաժնում

ՍՊ Ընկերությունների գրանցումն իրականացվում է 15 րոպեում,
ՓԲ Ընկերությունների գրանցումը՝ 20 րոպեում

/մանրամասները տեսանյութում/

Գրանցման համար անհրաժեշտ տեղեկատվություն.

- ընկերության անվանում
- ընկերության կազմակերպաիրավական ձև
- հիմնադիրների կամ սեփականատերերի ցանկ
- գործադիր ղեկավարի վերաբերյալ տեղեկատվություն
- գրանցման հասցե
- կանոնադրական կապիտալի չափ

Կազմակերպություններին՝ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

- գրանցման վկայական
- կանոնադրություն կամ համարժեք այլ փաստաթուղթ
- պետական միասնական գրանցամատյանից քաղվածք
- բաժնետերերի (իրական շահառուների) ցանկը
- հիմնադրի, տնօրենի անձը հաստատող փաստաթուղթ
- բանկի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր

ՀՀ-ում գործող հարկային համակարգ

Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	Եկամտահարկ	Շահութահարկ	Շրջանառության հարկ	Շահաբաժինների հարկ
20%	*20%*	*18%*	*1.5-25%*	*5%*

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց միջոցառում

Տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիր

Արտադրական կարողությունների արդիականացման նպատակային ծրագիր

Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառում

Կլինիկական փորձարկումների, կենսահամարժեքության հետազոտությունների իրականացման փոխհատուցման ծրագիր



Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագիր

Հարկային արտոնություններ

Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր

Ներդրումային ֆոնդերում ներդրումներ կատարելու ծրագիր

Ազատ տնտեսական գոտիներ

Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց միջոցառում

Ներդրումային ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքն անհրաժեշտ ենթակառուցվածքով ապահովման համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում

Ներդրումային ծրագրի իրականացում՝

Երևան քաղաքի առաջին և երկրորդ կադաստրային գոտուց դուրս տարածքում

Ներդրումային ծրագրի ուղղվածություններ՝

- **գյուղատնտեսություն (ՏԳՏԴ A խումբ),**
- **մշակող արդյունաբերություն (ՏԳՏԴ C խումբ) կամ**
- **ծառայությունների մատուցում (ՏԳՏԴ H 52, I, J 63.1 խմբեր)**

Ներդրումային ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը ներառում է՝ ներդրումային ծրագրով նախատեսված համապատասխան գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ **անշարժ գույքի կառուցման** և **հիմնական միջոցների** ձեռքբերման համար իրականացված ծախսերի հանրագումարը

Ներդրումների ծավալը հաշվարկվում է՝

Էկոնոմիկայի նախարարության հետ պայմանագրի կնքումից հետո

Օժանդակության արժեքը չի կարող գերազանցել ենթակառուցվածքի 70 % և ոչ ավելի, քան՝

	ընդհանուր ներդրումային ծրագրի
Մինչև 500 մլն դրամի ներդրումների համար	10% -ը
500 մլն դրամ և ավելի ներդրումների համար	20% -ը
ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված համայնքներում	40% -ը

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- **ճանապարհները**
- **գազամատակարարումը**
- **ջրամատակարարումը**
- **էլեկտրամատակարարումը**
- **ջրահեռացումը**
- **հեռահաղորդակցության համակարգերը**

Պատասխանատու ստորաբաժանում՝
Ներդրումային ծրագրերի վարչություն
011 597 119

ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 24-ի N 1343-Ն որոշում

Տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության ծրագիր

Տնտեսվարողներին աջակցությունը տրամադրվում է 3 փուլով՝

կատարված ներդրումների 10 % չափով

երբ ընկերության իրացումը կհասնի կատարված ներդրումների 10 տոկոսին, ապա կտրվի 5 % չափով

շահութահարկի 100 %-ի և եկամտահարկի 50 %-ի հանրագումարի չափով

Ներդրումների ծավալի նվազագույն շեմ՝ 1 մլրդ դրամ

Ապրանքի տնտեսական բարդության ցուցիչը սահմանվում է մեկնարկի տարվա ցանկի հիման վրա

Հոսքի աջակցության տարեկան չափի որոշման **չափորոշիչներ**

դիմումի ներկայացմանը նախորդող տարում շահառուի կողմից իրացված տնտեսապես բարդ ապրանքների տնտեսական բարդության միջին կշռված ցուցիչ

դիմումի ներկայացմանը նախորդող տարում շահառուի իրացման շրջանառությունում տնտեսապես բարդ ապրանքների արտահանումից գոյացած հասույթի մասնաբաժին

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գործարար միջավայրի վարչություն՝
011 597 131

ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 26-ի N 1867-Ն որոշում

Արտադրական կարողությունների արդիականացման նպատակային ծրագիր

Տրամադրվում է՝ նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների կողմից նոր սարքավորումների ձեռքբերման նպատակով ֆինանսական կառույցների կողմից տրամադրված վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորմամբ:

Միջոցառման նպատակը՝ տնտեսվարողների համար ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիություն՝ արդիականացնելու արտադրական հնարավորությունները և խթանելու նոր տեխնոլոգիաների ներմուծումը ՀՀ:

Վարկի/լիզինգի օգտագործման ուղղություններ՝

-նոր/չօգտագործված մեքենասարքավորումների ձեռքբերում
-կապիտալ շինարարության իրականացում
-թվային հարթակների ձեռքբերում
-արտադրողականության աճի խորհրդատվություն

Վարկի/լիզինգի սուբսիդավորվող առավելագույն չափը	**10 մլրդ ՀՀ դրամ**
Վարկի/լիզինգի առավելագույն սուբսիդավորվող տոկոսադրույքը	**մինչև 10 %**
Վարկի/լիզինգի սուբսիդավորվող ժամանակահատված	**մինչև 42 ամիս**
Մատակարարման ժամկետի սուբսիդավորում	**մինչև 180 օր**

Նպատակային ոլորտները

C «Մշակող արդյունաբերություն»
B «Հանքագործական արդյունաբերություն եվ բացահանքերի շահագործում» (բացառությամբ 7-րդ հատվածի)
D «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում»
J «Տեղեկատվություն և կապ»
F «Շինարարություն»
G 45.2 «Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում»
H «Փոխադրում և պահեստային տնտեսություն»
I 55 «Կացության կազմակերպում» (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններում կացության կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսվարողների)
M «Մասնագիտական, գիտական եվ տեխնիկական գործունեություն»
N 77 «Վարձույթ և լիզինգ»
P «Կրթություն»
Q «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում»
R 90 «Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն»

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գիտելիքահենք տնտեսության վարչություն
011 597 130

ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N 355-Լ որոշում

Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում միջոցառում

Բարձր որակավորում ունեցող օտարերկրյա մասնագետների ներգրավման դեպքում վերջիններիս վճարվող աշխատավարձերի 20-70% փոխհատուցում՝ կախված մասնագետի որակավորումից:

Միջոցառման նպատակն է աջակցել տնտեսվարողներին **ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետների**, ինչը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ընկերությունների արտադրողականության բարձրացմանը:

Բարձր որակավորում ունեցող մասնագետն է ով՝

գործատուի կողմից ծրագրին դիմելու օրվան նախորդող 30 ամսից առնվազն 12-ը ապրել է ՀՀ տարածքից դուրս, 2 ամիս անընդմեջ հանդիսացել է գործատուի աշխատակիցը և բավարարում է ստորև նշված պայմաններից գոնե մեկին՝

ավարտել է ծրագրին դիմելու տարում հրապարակված QS համաշխարհային համալսարանների վարկանիշի (QS World University Rankings) **առաջատար 400 ԲՈՒՀ-երից որևէ մեկը** և ստացել է բակալավրի, մագիստրոսի և/կամ դոկտորի որակավորում/աստիճան

ունի նվազագույնը 10 տարվա աշխատանքային փորձ հետևյալ վարկանիշային կամ ինդեքս թողարկող ընկերությունների կողմից թողարկված վարկանիշի կամ ինդեքսի մաս կազմող ընկերություններում՝ Forbes, Fortune, HeadHunter, NIFTY, Dow Jones, FTSE, S&P, SSE Composite, SZSE, KOSPI, KOSDAQ, BSE SENSEX, NSE of India, BOVESPA, IBrX, ITEL, Nikkei, TOPIX, DAX, MDAX, MOEX Russia

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գիտելիքահենք տնտեսության վարչություն
011 597 130

ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N 355-Լ որոշում

Կլինիկական փորձարկումների, կենսահամարժեքության հետազոտությունների իրականացման փոխհատուցման ծրագիր

ՀՀ-ում **դեղերի արտադրության խթանման**, **արտադրության ծախսերի նվազեցման**, **արտադրատեսականու ընդլայնման** նպատակով կառավարությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող դեղերի կլինիկական փորձարկումների և (կամ) կենսահամարժեքության հետազոտությունների ծախսերի մասնակի փոխհատուցում:

Պարտադիր պահանջներ՝

Արտադրվող արտադրանքը պետք է համապատասխանի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված «դեղ» հասկացությանը:

Հայտատուն փոխհատուցում ստանալու նպատակով հայտի ներկայացման պահի դրությամբ **չպետք է ունենա չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթ**:

Ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրվող փոխհատուցման չափը՝

1. կլինիկական փորձարկումների ծախսերի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր հետազոտության համար 25 մլն դրամ,
2. կենսահամարժեքության հետազոտությունների ծախսերի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր հետազոտության համար 30 մլն դրամ:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Ռազմավարական ոլորտների վարչություն
011 597 125

ՀՀ կառավարության 2024 թ. մարտի 7-ի N 349-Ն որոշում

Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագիր

Պարտադիր պահանջներ՝

Հայտատուն փոխհատուցում ստանալու նպատակով հայտի ներկայացման պահի դրությամբ չպետք է ունենա չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթ:

Վճարների (տուրքերի) կամ ծախսերի գումարի չափն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում այն հաշվարկվում է հայտատուի կողմից վճարի (տուրքի) փաստացի վճարման կամ ծախսի փաստացի կատարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված փոխարժեքով:

Պետությունից ակնկալվող փոխհատուցման գումարի չափը չպետք է գերազանցի հայտի ներկայացման օրվա դրությամբ ծրագրի իրականացման նպատակով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով տվյալ տարվա համար սահմանված ֆինանսական միջոցների մնացորդը:

Ծրագրի շրջանակներում տրամադրվող փոխհատուցման չափը՝

1. Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում ԵԱՏՄ գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ տրամադրվում է **յուրաքանչյուր դեղի համար 50 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 1.05 մլն դրամը**:

2. Միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ իրականացվում է **յուրաքանչյուր դեղի համար 50 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 550 հազար դրամը**:

3. Ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննության վճարների (տուրքերի) 50 %-ի չափով փոխհատուցումը ներառված է ծրագրի 4-րդ և 5-րդ կետերում նշված ֆինանսավորման գումարի մեջ:

4. Արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների ծախսերի փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ իրականացվում է **յուրաքանչյուր դեղի համար 50 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 2.5 մլն դրամը:**

Պատասխանատու ստորաբաժանում՝
Ռազմավարական ոլորտների վարչություն
011 597 125

ՀՀ կառավարության 2024 թ. հուլիսի 4-ի N 1034-Ն որոշում

Հարկային արտոնություններ

Հարկային արտոնություններ սահմանամերձ և այլ համայնքներում գործունեության համար

Սահմանամերձ համայնքներում իրականացվող տնտեսական գործունեությունն **ազատվում է ԱԱՀ-ից, շահութահարկից և շրջանառության հարկից**:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում և հարակից շրջաններում ներդրումային ծրագրերը կարող են ազատվել ԱԱՀ-ից և շահութահարկից:

Ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների և հումքի մաքսատուրքից ազատում

Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում **ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները**, **դրանց բաղկացուցիչ** ու **համալրող մասերը**, **հումքը** և **նյութերը** հնարավորություն ունեն ազատվելու ներմուծման մաքսատուրքից:

Օրենսդրությամբ մի շարք ապրանքների ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից (մասնավորապես հումքեր, սարքավորումներ և այլն):

Մաքսատուրքի վճարման արտոնություններ

ՀՀ ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատվում և որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնություններ սահմանված կարգով տրամադրվում են ՀՀ լիազոր պետական կառավարման մարմինների կողմից, ինչպես նաև վերջիններիս կողմից իրականացվում են ՀՀ տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող եզրակացության տրամադրման ընթացակարգի վերաբերյալ կարգավորումներ:

Ակցիզային հարկի գումարների փոխհատուցում

ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 1208-Ն որոշմամբ կիրառվում է փոխհատուցում արդյունաբերական կազմակերպությունների կողմից ձեռք բերված՝ ԱՏԳ ԱԱ 2710 19 710 0 - 2710 19 980 0 ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 0 ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարների համար:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Արդյունաբերության քաղաքականության վարչություն
011 597 142

Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր

Ծրագիրն ուղղված է ՀՀ կապիտալի շուկային և դեպի տնտեսության իրական հատված ֆինանսավորման հոսքերին նոր լիցք հաղորդելուն:

Օժանդակության տեսակներն են՝	Օժանդակության չափերն են՝
Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման համար օժանդակություն	մեկանգամյա օժանդակություն՝ տեղաբաշխման անվանական արժեքի 2 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան 30 մլն ՀՀ դրամը, պարտատոմսերի շրջանառության համար տեղաբաշխման անվանական ծավալի երեքական տոկոսի չափով օժանդակություն առաջին երեք տարիների համար, առավելագույնը՝ 45 մլն ՀՀ դրամ:
Բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման համար օժանդակություն	փոխհատուցվում են փաստացի կատարված և համապատասխան փաստաթղթերով հիմնավորված ծախսերի 80%-ը, սակայն ոչ ավելի, քան 50 մլն ՀՀ դրամը (*յուրաքանչյուր շահառուի համար միայն մեկ անգամ)
Միջազգային վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման և սպասարկման առաջին տարվա ծախսերի փոխհատուցում	Fitch, Standard and Poor's, Moody's կամ Scope Ratings վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման և սպասարկման առաջին տարվա ծախսերի **փոխհատուցում 50%-ի չափով**: Շահառուի կողմից վարկանիշի ստացման օրվանից սկսած 18 ամսվա ընթացքում պարտատոմսերի կամ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման և ՀՀ-ում գործունեություն իրականացնող ֆոնդային բորսայում ցուցակման դեպքում շահառուին կտրամադրվի վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման և սպասարկման առաջին տարվա ծախսերի 80%-ը (30%՝ ի հավելումն նախորդող 50%-ի), եթե պահպանվել են համապատասխան պահանջները:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման վարչություն
011 597 239

ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1125-Լ որոշում

Ներդրումային ֆոնդերում ներդրումներ կատարելու ծրագիր

Ծրագիրն ուղղված է՝

- ներդրումային կարողությունների ավելացմանը
- հայաստանյան շուկա նոր մուտք գործող ֆոնդերի կառավարիչների համար առավել գրավիչ պայմանների ստեղծմանը
- իրական հատվածի համար ֆինանսներին հասանելիության դյուրացմանը

Ներդրումների չափը և ձևը

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության մասնակցությունը տնտեսության գերակա ոլորտներում ներդրումներ իրականացնող ֆոնդերում՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տվյալ ֆոնդում ներդրողի կողմից առնվազն 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) դրամի չափով փայերի ձեռքբերման պարագայում՝ ֆոնդի զուտ ակտիվների 30%-ի չափով, սակայն ոչ ավելի, քան 3,000,000,000 (երեք միլիարդ) դրամը:

Ծրագրի իմաստով գերակա ոլորտներ են համարվում մշակվող արդյունաբերությունը, էներգետիկան և զբոսաշրջությունը:

Ծրագրի շահառու են համարվում ՀՀ Հարկային օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ՀՀ ռեզիդենտ և գերակա ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրում կատարող ներդրումային ֆոնդերը, որոնք կառավարվում են առնվազն 1 մլրդ ԱՄՆ դոլարի չափով ակտիվներ կառավարող կառավարիչների կողմից:

Շահառուի փայերը ձեռք են բերվում ՀՀ կառավարության կողմից ի դեմս էկոնոմիկայի նախարարության:
Ֆոնդում Կառավարության մասնակցության առավելագույն ժամանակահատվածը 20 տարի է՝ հաշված ներդրումը կատարելու օրվանից:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման վարչություն
011 597 239

ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի N 93-Լ որոշում

Ազատ տնտեսական գոտիներ (ԱՏԳ)

ԱՏԳ շահագործողները ազատված են ԱԱՀ, շահութահարկի, անշարժ գույքի հարկի, մաքսատուրքի վճարման պարտավորությունից

«Այլանս» ԱՏԳ

արտադրաարդյունաբերական և տեխնիկակիրառական էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության (տվյալների) ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներ

Գործում է 2013 թ-ից, Երևան

«Մեղրի» ԱՏԳ

արտադրաարդյունաբերական և լոգիստիկ՝ գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, էլեկտրականության մատակարարման, առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, մասնագիտական և տեխնիկական գործունեության, մշակույթի, զբոսաշրջության, զվարճությունների և հանգստի ոլորտներ

Գործում է 2017թ-ից, Մեղրի

«Մերիդիան» ԱՏԳ

արտադրաարդյունաբերական՝ ոսկերչության, ակնագործության ու ժամագործության ոլորտներ

Գործում է 2015թ-ից, Երևան

«Էկոս» ԱՏԳ

արտադրական և տեխնիկակիրառական՝ մշակող արդյունաբերության, բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներ

Գործում է 2019 թ-ից, Հրազդան

Պատասխանատու ստորաբաժանում՝
Տնտեսական գոտիների և ենթակառուցվածքների զարգացման բաժին
011 597 142

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր

ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր

ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-25 թթ.-ի ծրագիր

ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիր

ՀՀ-ում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-26 թթ-ի ծրագիր

ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-25 թթ-ի ծրագիր

ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագիր

Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-28 թթ.-ի ծրագիր

Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագիր

Մթերատվության բարձրացման փորձնական ծրագիր

Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիր

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր

ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր

Տրամադրվում են հետևյալ ոլորտներում օգտագործվող **սարքավորումներ՝**

- անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, մեղվաբուծություն, ձկնաբուծություն, արդյունագործական գազանաբուծություն, խխունջաբուծություն
- բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմատնային տնտեսություն
- սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ և կաթ տեղափոխող իզոթերմիկ ցիստերներ
- թարմ պտուղբանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեություն
- սպանդանոցային տնտեսություն, շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներ, ինչպես նաև սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներ
- ագրովերամշակող արդյունաբերություն, ագրոպարենային գործունեության այլ ոլորտներ.

Ծրագրի շրջանակներում ագրոպարենային ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կտրամադրվեն նաև ավտոամբարձիչ և հիմնական միջոց հաշվառվող հումքի և արտադրանքի պահման մետաղյա տարողություններ ու գինեգործության ոլորտում օգտագործվող կաղնեփայտե տարաներ:

Լիզինգի տրամադրման պայմաններն են՝

յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 2000.0 մլն դրամը	**20% կանխավճար**
լիզինգի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, լիզինգի առարկան պարտադիր ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից՝ ֆինանսական կառույցների հաշվին	**մինչև 5 տարի մարման ժամկետ**

Տրամադրվող լիզինգների առավելագույն տոկոսադրույք չի սահմանվում:
Սուբսիդավորվում է ՀՀ դրամով տրամադրված լիզինգի 10, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 6 տոկոսային կետը, իսկ սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար՝ ՀՀ դրամով տրամադրված լիզինգի 12, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 7 տոկոսային կետը, եթե ձեռք բերվող սարքավորումները շահագործվելու են նույն վայրերում:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Ագրովերամշակման վարչություն՝
011 597 236, 011 597 258
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝ 011 597 217
ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ կառավարության 19 հուլիսի 2018 թվականի N 893 - Լ որոշում

ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակներում տնտեսվարողներին կտրամադրվի հետևյալ գյուղատնտեսական տեխնիկան՝

- տրակտորներ՝ տարբեր մակնիշների
- կոմբայններ
- հավաքիչ-մամլիչներ
- շարքացաններ
- գութաններ, խոտհնձիչներ
- կարտոֆիլատնկիչներ, կարտոֆիլաքանդիչներ
- կուլտիվատորներ, ֆրեզներ,
- սրսկիչներ,
- տրակտորային կցասայլակներ,
- այլ գյուղատնտեսական տեխնիկա

լիզինգի առարկաների գումարը մինչև **250** մլն. դրամ

20% կանխավճար

3-10 տարի մարման ժամկետ

0-2% տարեկան տոկոսադրույք

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 523 411, 011 597 254,
011 297 428, 011 529 231

ՀՀ Կառավարության 2022թ. հունվարի 27-ի N 105-Լ որոշում

ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-25 թթ-ի ծրագիր

Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում

0.5 (յուրաքանչյուր պտղատեսակի համար)-500 հա այգեհիմնում (ներառյալ առաջին տարվա խնամքի ծախսերը)

վարկերի մարման ժամկետներն են՝ այգեհիմնում կատարելու դեպքում 8 տարի, մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 5 տարի

0.5 և ավելի հա տարածքի համար ոռոգման արդիական համակարգերի ներդրում կամ մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցում կամ ընդլայնում

վարկերի մարման ժամկետներն են՝առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգեր ներդնելու, ինչպես նաև ջրավազանների կառուցման կամ ընդլայնման դեպքում՝ 4 տարի, մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 1 տարի

0.5-100 հա կարկտապաշտպան ցանցերի ներդրում

վարկերի մարման ժամկետներն են՝ առանց այգեհիմնման կարկտապաշտպան համակարգեր ներդնելու դեպքում՝ 7 տարի, մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 3 տարի

1.0-30 հա ծնեբեկի, պրասասոխի, ռուկոլայի, բրյուսելյան և պեկինյան կաղամբների, կոլրաբիի, գանգրակաղամբի (կալե), ցուկինիի (դեղին կամ մուգ կանաչ) և պատիսոնի, քաղցր եգիպտացորենի, ինչպես նաև հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակություն

վարկերի մարման ժամկետներն են՝ ոչ ավանդական բարձրարժեք, այդ թվում՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի դեպքում՝ 2 տարի (ծնեբեկի դեպքում՝ 5 տարի), մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 1 տարի (ծնեբեկի դեպքում՝ մինչև 4 տարի)

Ծախսերի մասնակի փոխհատուցում

0.5 և ավելի հա ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերում և ներդրում

մինչև 100 հազար խմ ծավալով ջրավազանների կառուցում կամ ընդլայնում

Փաստացի կատարված ծախսերի 50 %
(1 հա-ի հաշվով ծրագրով գնահատված ծախսերի առավելագույն սահմանաչափերի 50 %):

Ոռոգման արդիական համակարգերի համար գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում՝ փաստացի կատարված ծախսերի 60 %
Ոռոգման արդիական շարժական համակարգ՝ 50 % (միավորի հաշվով՝ 7.5 մլն դրամից ոչ ավելի, յուրաքանչյուր շահառուին փոխհատուցում՝ մինչև 75.0 մլն դրամ):

Սուբսիդավորվում է վարկի՝ **9%**,
ջրավազանի դեպքում՝ **12%**

Պատասխանատու ստորաբաժանում՝
Բուսաբուծության վարչություն՝
011 597 120, 011 597 290,
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 597 217

ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 3-ի N 927-Լ որոշում

ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիր

Ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ՝

անասնաբուծության ճյուղում՝ տավարաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության ուղղություններով առնվազն 1 մլրդ դրամի ներդրումային ծրագիր իրականացնող ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք ունեն բարվոք հարկային և վարկային պատմություն:

- Անասնաբուծության ճյուղում՝ տավարաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության ուղղություններով առնվազն **1 մլրդ** դրամի (**սահմանամերձ** համայնքների բնակավայրերում՝ առնվազն **500,0 մլն** դրամի) ներդրումային ծրագիր:
- Մեկ շահառուին տրամադրվող **առավելագույն փոխհատուցում՝** ընդամենը կատարված կապիտալ ներդրումների **40 %**, բայց ոչ ավելի, քան **3.5 մլրդ** դրամը:

ՀՀ-ում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-26 թթ-ի ծրագիր

Խեցգետինների բուծման 3 տիպի համալիրներ.

- **Փոքր՝ 460 մ2** շինությունների ընդհանուր մակերեսով, 6 տոննա հզորությունով արդյունաբերական խեցգետնաբուծարան, համալիրի ներդրումների և արտադրական ծախսերի կողմնորոշիչ (առավելագույն) ցուցանիշը՝ **72 000 հազար ՀՀ դրամ:**
- **Միջին՝ 800 մ2** շինությունների ընդհանուր մակերեսով, 12 տոննա հզորությունով արդյունաբերական խեցգետնաբուծարան, համալիրի ներդրումների և արտադրական ծախսերի կողմնորոշիչ (առավելագույն) ցուցանիշը՝ **129 900 հազար ՀՀ դրամ:**
- **Խոշոր՝ 1000 մ2** շինությունների ընդհանուր մակերեսով, 18 տոննա հզորությունով արդյունաբերական խեցգետնաբուծարան, համալիրի ներդրումների և արտադրական ծախսերի կողմնորոշիչ (առավելագույն) ցուցանիշը՝ **183 790 հազար ՀՀ դրամ:**

Ներդրումների համար կատարված **ծախսերի փոխհատուցում՝ 50 %**, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր ծախսային հոդվածի 50 %:

Կանխատեսվում է յուրաքանչյուր տարի հիմնել 4 փոքր և 1-ական միջին և խոշոր խեցգետնաբուծական համալիր:

Նախատեսվում է բուծել միայն ավստրալական կարմրաչանչ խեցգետին:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 523 411, 011 597 254,
011 297 428, 011 529 231
ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ Կառավարության 2022 թ. մարտի 3-ի N 276-Լ որոշում

ՀՀ Կառավարության 2023թ. ապրիլի 13-ի N 532-Լ որոշում

ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-25 թթ-ի ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է հողերի միավորման պետական աջակցության միջոցով խթանել՝

- արտադրողականության բարձրացմանը և ինքնարժեքի իջեցմանը
- նոր աշխատատեղերի ստեղծմանը
- հողերի նպատակային օգտագործմանը և արդյունավետ կառավարմանը
- նպաստել գյուղատնտեսության ոլորտում ներդրումների ծավալների ավելացմանը և մրցունակության բարձրացմանը

Շահառուներին հողերի միավորման (կոնսոլիդացիայի) համար տրամադրվում է պետական աջակցություն նախարարության հետ պայմանագիր կնքելուց հետո ձեռք բերված և միավորված առանձին գույքային միավոր հանդիսացող **հողամասերի կադաստրային արժեքի *30%*-ի չափով՝** ծրագրի պահանջներին համապատասխան միավորում իրականացնելու դեպքում:

Պետական աջակցություն ստանալու համար միավորված հողամասի հանրագումարային մակերեսը պետք է կազմի առնվազն *5* հա, ընդ որում՝ **աջակցությունը տրամադրվում է ոչ ավելի, քան 200 հա-ի** (ներառյալ) համար:

ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր

յուրաքանչյուր շահառուի ջերմատան կառուցման համար կարող է տրամադրվել **առավելագույնը 3.0 մլրդ դրամի չափով վարկ**

հիմնվող **ջերմատան առավելագույն մակերեսի սահմանափակում չի նախատեսվում**

հիմնվող յուրաքանչյուր մեկ ամբողջական ջերմատան մակերեսը պետք է լինի 1 հա և ավելի

տրամադրվող վարկի տոկոսադրույքը կսուբսիդավորվի 10 տոկոսային կետով

վարկի մարման առավելագույն ժամկետ՝ **8 տարի**

ջերմատան կառուցման համար սահմանված առավելագույն ժամկետ 1.5 տարի

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 523 411, 011 597 254,
011 297 428, 011 529 231

ՀՀ Կառավարության 2022 թ. օգոստոսի 4-ի N 1220-Լ որոշում

ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ Կառավարության 2023 թ. հուլիսի 27-ի N 1284-Լ որոշում

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

Տոկոսադրույքների սուբսիդավորմամբ վարկերի նպատակները դասակարգվում են ըստ հետևյալ ուղղությունների՝



- պտուղբանջարեղենի գնումներ
- խաղողի գնումներ
- կաթի գնումներ
- սպանդանոցների կողմից գյուղատնտեսական կենդանիների գնումներ
- շինշիլայի գնումներ

Տրամադրվող վարկերն ունեն առավելագույնը՝

3 տարի մարման և 12 ամիս արտոնյալ ժամկետ՝ խաղողի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի համար

1.5 տարի մարման և 6 ամիս արտոնյալ ժամկետ՝ գյուղատնտեսական հումքի (բացառությամբ խաղողի) մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի համար

✔ Տրամադրվող վարկերի առավելագույն տոկոսադրույք չի սահմանվում:

✔ Սուբսիդավորվելու է վարկի տոկոսադրույքի տարեկան 9 տոկոսային կետը, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող և նույն վայրերում գյուղատնտեսական հումք մթերող և վերամշակող տնտեսավարողների համար՝ 12 տոկոսային կետը:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 523 411, 011 597 254,
011 297 428, 011 529 231
Ագրովերամշակման վարչություն՝
011 597 236, 011 597 258

ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 28-ի N 201-Լ որոշում

Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագիր

նպատակն է բնակավայրերի տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման արդյունքում խթանել բարձր բերքատվությամբ, հավաստագրված տնկիներով այգիների հիմնումն ու ջրային ռեսուրսների արդյունավետ ու խնայողաբար օգտագործումը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2023-2025 թթ-ին՝
Տավուշի մարզի Իջևան համայնքի
Բերքաբեր և Խաշթառակ բնակավայրերում

Ծրագրի շրջանակում կապալառուն
աշխատանքները պետք է ավարտի մինչև 2025 թվականի նոյեմբերի 10-ը

Ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ՝

- առնվազն 100 քառ. մետրից մինչև 1000 քառ. մետր մեկ ամբողջական
- ծառերից և այլ գույքից ազատ
- տնամերձ հողամաս ունեցող տնտեսվարողները

Տնամերձ հողամասերում այգետնկման համար առաջարկվող պտղատեսակներն են՝
տանձենի, նռնենի, հոնենի, մոշ և ազնվամորի:

Տնամերձ հողամասերում այգեհիմնում և ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնման մրցութային գործընթացում հաղթող ճանաչված կապալառուի հետ կնքված գնման պայմանագրի արժեքի ամբողջական ֆինանսավորմամբ՝ հետևյալ համամասնությամբ՝

1. նախարարություն՝ պայմանագրային արժեքի 95 տոկոսը
2. համայնք կամ շահառու՝ պայմանագրային արժեքի 5 տոկոսը

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչություն՝
011 597 140
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 597 217

ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ Կառավարության 2023 թ. հուլիսի 6-ի N 1098-Լ որոշում

Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028 թթ. ծրագիր

Ծրագրի շրջանակում շահառուները փոխհատուցման եղանակով հնարավորություն ունեն ձեռք բերել բարձր մթերատու տոհմային մանր եղջերավոր կենդանի

Մեկ տոհմային կենդանու առավելագույն գինը սահմանվել է՝

- Հայաստանի Հանրապետության ներսում ձեռք բերված՝ 300 հազար ՀՀ դրամ
- արտերկրից ներկրման դեպքում՝ 450 հազար ՀՀ դրամ

Շահառու կարող են հանդիսանալ	իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը
Շահառուն կարող է ձեռք բերել	նվազագույնը 5 գլուխ կենդանի (4 էգ, 1 արու), իսկ առավելագույնը 300 գլուխ (այդ թվում՝ 10 գլխից ոչ ավելի արու մատղաշ)
Կփոխհատուցվի	յուրաքանչյուր ձեռք բերված (ներկրված) տոհմային կենդանու արժեքի 50%-ը

Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագիր

Ծրագրի շրջանակում շահառուները փոխհատուցման եղանակով հնարավորություն ունեն *2* տարվա ընթացքում ձեռք բերել *10 000* մեղվաընտանիք

1 մեղվաընտանիքի (մեղվափեթակների հետ միասին՝ 8-12 շրջանակով) արժեքը սահմանված է 80 000 ՀՀ դրամ:

Շահառու կարող են հանդիսանալ	իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը
Շահառուն կարող է ձեռք բերել	նվազագույնը՝ 10 և առավելագույնը՝ 50 մեղվաընտանիք (մեղվափեթակների հետ միասին՝ 8-12 շրջանակով).
Կփոխհատուցվի	ձեռք բերված յուրաքանչյուր մեղվաընտանիքի (մեղվափեթակի հետ միասին) արժեքի 50 %-ը, բայց ոչ ավելի, քան 40000 ՀՀ դրամը:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչություն՝
011 597 140
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 597 217

ՀՀ Կառավարության 2024 թ. օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշում

ՀՀ Կառավարության 2024 թ. օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշում

ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

Մթերատվության բարձրացման փորձնական ծրագիր

Ծրագրով նախատեսվում է փոխհատուցել՝
սերմնավորման արժեքի *10* հազար դրամը,
իսկ *5* հազար դրամը կվճարի տնտեսվարողը:

Ծրագրի մասնակիցներն են՝

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը
2. ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետների աշխատակազմերը
3. արհեստական սերմնավորում իրականացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք՝

ա. ունեն տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու **առնվազն 1 տարվա փորձ** և համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ:

բ. **ունեն վարկային դրական պատմության վերաբերյալ զեկույց** (ըստ ԱՔՐԱ համակարգի՝ դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում չեն ունեցել գումարային 60 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ):

գ. **ունեն բարվոք հարկային պատմության վերաբերյալ տեղեկանք** (հայտի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական վարույթ հարուցված չէ, կամ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչություն՝
011 597 140
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝
011 597 217

ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ Կառավարության 2024 թ. օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշում

Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիր

Ծրագրի նպատակն է՝

- սպանդանոցային սպանդը խրախուսելը
- ԱԱՀ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հավասար մրցակցային պայմաններ ստեղծելը
- ազգաբնակչությանը որակյալ, անվտանգ մսեղիքի մատակարարումներ ապահովելը

Ծրագրից կարող են օգտվել՝

ֆերմերային տնտեսությունից և ֆիզիկական անձից խոշոր եղջերավոր կենդանիների գնումներ, սպանդանոցային սպանդ և մսեղիքի իրացման գործառույթներ իրականացնող տնտեսվարողները

Աջակցության տրամադրման գործընթացը նախաձեռնում է տնտեսվարողը

Ծրագրի շրջանակներում մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը տնտեսավարողին տրամադրվում է հաշվետու ժամանակաշրջանում սպանդանոցային գործունեության արդյունքում խոշոր եղջերավոր **կենդանիների սպանդից ստացված մսեղիքի իրացման՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված** ԱԱՀ-ի գումարների և խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարների դրական տարբերության **75%-ի չափով աջակցություն**:

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական խորհրդատվության
և նորարարությունների վարչություն՝
011 523 411, 011 597 254, 011 297 428, 011 529 231
Ագրովերամշակման վարչություն՝
011 230 180, 011 235 471, 011 597 236, 011 597 258
ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի N 1176-Լ որոշում

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր

Ծրագրի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար կարելի է դիմել հետևյալ ապահովագրական ընկերություններին:

«Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
«Լիգա Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ
«Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ

Ծրագրի հիմնական նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Ծրագրով ապահովագրավճարի չափը կսուբսիդավորվի 50-60 %:

Ռիսկեր՝

- Գարնանային ցրտահարություն
- Կարկուտ
- Երաշտ
- Հրդեհ

Պատասխանատու ստորաբաժանում՝
Գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչություն՝
011 597 140
Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչություն՝ 011 597 217
ԹԵԺ ԳԻԾ՝ 81-40

ՀՀ Կառավարության 2019 թ. հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշում

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

secretariat@mineconomy.am

011 597 205

www.mineconomy.am